Բնապահպանական մոնիթորինգի կիսամյակային հաշվետվություն

Կիսամյակային հաշվետվությունը (Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ) ընդգրկում է 2017թ. հուլիսից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածը

ARM: **էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման ծրագիր «220/110կՎ «Շինուհայր» և «Ագարակ-2» ենթակայանների վերակառուցում»**

Ծրագրի համար: 46416-002

ԱԶԲ Վարկի/դրամաշնորհի համար: L3150-ARM

Պատրաստված՝ 2018թ. հունվարին

Պատրաստված է Բարձրավոլտ էլեկտրացանցեր Փակ բաժնետիրական ընկերության կողմից (ԲԷՑ) Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի համար (ԱԶԲ):

Բնապահպանական մոնիթորինգի այս հաշվետվությունը Վարկառուի փաստաթուղթն է: Այս փաստաթղթում տեղ գտած տեսակետները պարտադիր չէ, որ ներկայացնեն ԱԶԲ-ի տնօրենների խորհրդի, ղեկավարության կամ անձնակազմի կարծիքները և նախնական բնույթ ունեն:

Ցանկացած երկրի ծրագիրը կամ ռազմավարությունը պատրաստելիս, ցանկացած ծրագիր ֆինանսավորելիս կամ այս փաստաթղթում որոշակի տարածք կամ աշխարհագրական շրջան նշելիս կամ վկայակոչելիս Ասիական զարգացման բանկը մտադրություն չունի դատողություններ անել ցանկացած տարածքի կամ շրջանի իրավական կամ այլ կարգավիճակի հետ կապված:

Բովանդակություն

Հավելվածներ.....5

Հապավումների ցանկ.....6

Մաս I Ներածություն.....7

1.1 Շինարարական գործողությունները և ծրագրի առաջընթացը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում.....8

1.2 Բնապահպանական միջոցառումների համար պատասխանատու անձնակազմ.....9

1.3 ԾԻԳ-ի բնապահպանական աշխատախումբ.....10

1.4 ԾՎԿԽԿ բնապահպանական աշխատախումբ.....10

1.5 Կապալառուի բնապահպանական աշխատախումբ.....10

Մաս II Բնապահպանական կառավարում.....11

2. Բնապահպանական երաշխիքների ծրագիր.....11

2.1 Համապատասխանությունը ազգային երաշխիքների հետ.....11

2.2 Համապատասխանությունը ԱՋԲ-ի երաշխիքների հետ 11

2.3 Կապալառուի աշխատանքների համապատասխանությունը ԿԲԿՊ հետ.....12

2.4 Դասընթացներ և իրազեկում.....12

2.5 Բողոքների լուծման մեխանիզմ.....13

2.6 Ծրագրի բնապահպանական գործողությունները և ծրագրի մեջ ներգրավված կազմակերպությունների միջև կապը/հաղորդակցությունը.....14

Մաս III Բնապահպանական մոնիթորինգ.....15

3. Մոնիթորինգ.....15

3.1 ԲԿՊ-ներիի համապատասխանության մոնիթորինգ Ագարակ-2 և Շինուհայր ենթակայաններում 15

3.2 Կապալառուն իրականացրել է հետևյալ հանձնարարությունները շտկելու համար անհամապատասխանությունները 16

Մաս IV Գործողությունների պլան հաջորդ ժամանակահատվածի համար.....17

Հավելված A.....19

Հավելված B.....,.....19
Հավելված C.....20
Հավելված D.....21
Հավելված E.....23
Հավելված F.....25
Հավելված G.....26
Հավելված H.....27
Նկարներ.....28

Հավելվածներ

Հավելված A Ագարակ-2 ենթակայանի տեղանքի սխեմա

Հավելված B Շինուհայր ենթակայանի տեղանքի սխեմա

Հավելված C Շինուհայր և Ագարակ-2 ենթակայանների տեղակայման վայրերը

Հավելված D Հաշվետու ժամանակահատվածում մոնիթորինգային այցելությունների ընթացքում հայտնաբերված անհամապատասխանությունները

Հավելված E Շինուհայր ենթակայանի շինարարության համար թույլտվություն

Հավելված F Աղբի տեղափոխման թույլտվություն՝ ձեռք բերված Տաթև համայնքի ղեկավարից

Հավելված G Աղբի տեղափոխման թույլտվություն՝ ձեռք բերված ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքից (ոչ պաշտոնական թարգմանություն)

Հավելված H Գրություն շարժական վագոնների տեղափոխման համար

Հապավումների ցանկ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ԲԷՑ ՓԲԸ	Բարձրավոլտ էլեկտրացանցեր փակ բաժնետիրական ընկերություն
ԾԻԳ	Ծրագիր իրականացնող գործակալություն
ԾՎԿԽԿ	Ծրագրի վերահսկման և կառավարման խորհրդատվական ընկերություն
LEEEC	Liaoning-EFACEC Electrical Equipment Co., LTD
ԲՄ	Միջազգային բնապահպան
ՆԲՓ	Նախնական բնապահպանական փորձաքննություն
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ԿԲԿՊ	Կապալառուի բնապահպանական կառավարման պլան
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԲԼՄ	Բողոքների լուծման մեխանիզմ

ՄԱՍ I

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանական մոնիթորինգի կիսամյակային այս հաշվետվությունը ընդգրկում է 2017թ-ի հուլիսից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածը:

Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման ծրագիրը կբարձրացնի էլեկտրաէներգիայի հաղորդման համակարգի աշխատանքի արդյունավետությունը և կնվազեցնի էլեկտրաէներգիայի հաղորդման կորուստները, որոնք կարևոր են էլեկտրաէներգիայի հաղորդման անվտանգության բարելավման և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման համար: Գոյություն ունեցող ենթակայանների վերակառուցումը կբարելավի քաղաքային և գյուղական սպառողներին էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիությունը և որակը՝ նվազեցնելով (մեղմացնելով) Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրաէներգիայի հաղորդման մարզային մատակարարման անհամաչափությունը/անհավասարությունը և աջակցելով համապարփակ ու կայուն տնտեսական զարգացմանը: Բացի այդ, էլեկտրաէներգիայի հաղորդման արդյունավետ և հուսալի համակարգը կհեշտացնի տարածաշրջանում միջսահմանային էլեկտրաէներգիայի առևտրի ընդլայումը:

Ծրագիրը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **Բարձր լարման** (**ԲԼ**) **չորս ենթակայանների վերակառուցում և ընդլայնում**: Այս բաղադրիչը ներառում է Ագարակ-2, Շինուհայր, Եղեգնաձոր և Արարատ-2 ենթակայանները: Ագարակ-2 (հավելված A) և Շինուհայր (հավելված B) ենթակայանները (Լոտ 1) կֆինանսավորվի ԱԶԲ կողմից:

Ենթակայանների վերակառուցումը ներառում է նոր ավտոտրանսֆորմատորների տեղադրում (միայն Ագարակ-2), հնացած լարման տրանսֆորմատորների, պարպիչների, անջատիչների, բաժանիչների, հենարանային մեկուսիչների, պողպատե պորտալների, հենարանների և հիմքերի, կառավարման/վերահսկողության և մշտադիտարկման սարքավորումների, պաշտպանության սարքավորումների, մարտկոցների և այլ օժանդակ համակարգերի փոխարինում: Ագարակ-2 և Շինուհայր ենթակայանների վերակառուցումը (Հավելված C) կիրականացվի 2016թ-ից մինչև 2018թ-ի վերջը:

2014թ-ի սեպտեմբերի 5-ին Հայաստանի հանրապետության (Վարկառու) և Ասիական զարգացման բանկի միջև կնքվել է Վարկային համաձայնագիր 23.400.000 ԱՄՆ դոլար գումարով: Համաֆինանսավորման մասը հանդիսանում է (հարկեր և տուրքեր) ԲԷՑ-ի պատասխանատվությունը:

Բնապահպանական տեսանկյունից այս ծրագիրը դասակարգվում է որպես "B" կատեգորիայի ծրագիր:

Համաձայն Վարկային համաձայնագրի ծրագիրը կիրականացվի Ծրագիր իրականացնող գործակալության, այսինքն Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ կողմից:

Շինարարության մասով Կապալառուն Liaoning-Efacec electrical Equipment Co., LTD և Northeast China Electric Power Corporation (NEIE) համատեղ ձեռնարկությունն է (LEEEC):

Վերահսկողություն իրականացնող խորհրդատուն իտալական CESI&INCICO S.p.A ընկերությունն է:

1.1. **Շինարարական գործողությունները և ծրագրի առաջընթացը հաշվետու ժամանակահատվածում**

Որպես Գլխավոր կապալառու Liaoning-Efacec electrical Equipment Co., LTD և Northeast China Electric Power Corporation (NEIE) համատեղ ձեռնարկութունը Ագարակ-2 ենթակայանում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար (05.2016թ-ի պայմանագիր No. ADB-L3150-ARM/HVEN/ICB), որպես ենթակապալառու վարձել է "Energanotogum" ՓԲԸ-ին (19.12.2016թ-ի պայմանագիր No. AGARAK/CW-2016/001): Ագարակ-2 ենթակայանի վերակառուցման աշխատանքները սկսվել են փետրվարի 15-ից: Ծրագրի տեղանքի համար Կապալառուի Բնապահպանական կառավարման պլանը հաստատվել է 2017թ-ի փետրվարի 9-ին:

Որպես Գլխավոր կապալառու Liaoning-Efacec electrical Equipment Co., LTD և Northeast China Electric Power Corporation (NEIE) համատեղ ձեռնարկությունը Շինուհայր ենթակայանում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար (05.2016թ-ի պայմանագիր No. ADB-L3150-ARM/HVEN/ICB), որպես ենթակապալառու վարձել է "Artashat Jrshin" ՍՊԸ-ին և "Big Energo" ՍՊԸ ՀՁ-ին (02.06.2017թ-ի պայմանագիր No. CW-2017/002): Շինուհայր ենթակայանի վերակառուցման աշխատանքները սկսվել են հունիսի 23-ից: Կապալառուի ծրագրի տեղանքին բնորոշ բնապահպանական կառավարման պլանը հաստատվել է 2017թ-ի հունվարի 23-ին:

Հաշվետու ժամանակահատվածում Ագարակ-2 ենթակայանում շինարարական աշխատանքները իրականացվել են ըստ ծրագրի համաձայնեցված ժամանակացույցի, սակայն Շինուհայր ենթակայանում ետ են ընկել ժամանակացույցից:

Կապալառուի բնապահպանության մասով մասնագետը կատարել է ամսական կանոնավոր բնապահպանական մշտադիտարկման այցելություններ Ագարակ-2 և Շինուհայր ենթակայաններ և ԾԻԳ-ի բնապահպանության մասով մասնագետին տրամադրել է շրջակա միջավայրի մասով ամսական հաշվետվություններ:

Տեղանք այցելությունների ընթացքում Կապալառուի բնապահպանության մասով մասնագետը կապալառուի անձնակազմին ներկայացրել է բնապահպանական և սոցիալական պահանջները, ինչպես նաև հնարավոր ռիսկերը, բացասական ազդեցությունները և ԲԿՊ-ով սահմանված մեղմացուցիչ գործողությունները:

Կապալառուի բնապահպանության մասով մասնագետը տեղանքներ վերոնշյալ այցելությունների ընթացքում պատասխանատու անձանց հանձնարարել է հետևել հատկորոշված պահանջներին և տվել է հետևել հանձնարարությունները՝

1. Խստորեն պահպանել անվտանգության կանոնները,
2. Հետևել վառելիքի և քսանյութերի տեղափոխման, լիցքավորման և պահպանման կանոններին բացառելու համար արտահոսքը շրջակա միավայր: Մասնավորապես,

աշխղեկին հանձնարարվել է տրամադրել համապատասխան տարածք և ապահովել ավազաշերտ, այն կանոնավոր փոխելու և թարմացնելու նախապայմանով,
3. Իրականացնել փոշու հեռացման կանոնավոր աշխատանքներ,
4. Գրանցել անձնակազմի անդամների և հարակից տարածքների բնակիչների կողմից բարձրացված հնարավոր ցանկացած սոցիալական խնդիր կամ բողոք և անմիջապես տեղեկացնել դրա մասին կապալառուի բնապահպանության մասով մասնագետին,
5. Գրանցել ցանկացած վթար և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած թափոնների քանակ:

Հաշվետու ժամանակահատվածում բողոքներ չեն գրանցվել :

Հաշվետու ժամանակահատվածում տեղանքում վթարներ չեն գրանցվել :

2017թ-ի նոյեմբերի 15-ին և 16-ին ԲԷՑ ՓԲԸ (ԾԻԳ) բնապահպանության մասով մասնագետը մշտադիտարկման այցելություններ է կատարել Ագարակ-2 և Շինուհայր ենթակայաններ: Մշտադիտարկման այցելության ընթացքում տեղանքի ղեկավարը և ծրագրի ղեկավարը բանավոր կերպով նախազգուշացվել են հայտնաբերված թերությունների մասին:

Հայտնաբերված թերությունները հետևյալ են՝

- Շինարարական աշխատանքների ընթացքում աշխատողները չէին կրում անհատական պաշտպանության միջոցներ (ԱՊՄ),
- Տեղանքում նկատվել է յուղի արտահոսք,
- Մոնիթորինգային այցելության ընթացքում հայտնաբերվել են շինարարական թափոններ (բետոնի և մետաղի մնացորդներ)

1.2. **Բնապահպանական միջոցառումների համար պատասխանատու անձնակազմ**

Ծրագիր իրականացնող գործակալությունը իրականացնում է ծրագրի իրականացման ամենօրյա կառավարում: ԾԻԳ ներառում է բնապահպանության մասով մասնագետ, ով պարտավորություն է ստանձնում իրականացնել ծրագրի բնապահպանության մասով բոլոր ասպեկտների կառավարումը:

Ծրագրի վերահսկման և կառավարման խորհրդատվական ընկերությունը (ԾՎԿԽԸ) ծրագրի կառավարման և հաշվետվության ներկայացման մասով ԾԻԳ-ին տրամադրում է տեխնիկական աջակցություն: ԾՎԿԽԸ բնապահպանության մասով միջազգային մասնագետը պատասխանատու է բնապահպանության հետ կապված շինարարական աշխատանքների վերահսկման և մասնավորապես ԲԿՊ իրականացման ընթացքում Կապալառուի կողմից կատարված աշխատանքների մասով վերահսկողության և հաշվետվության ներկայացման համար:

Կապալառուն պատասխանատու է շինարարական աշխատանքների իրականացման համար: Կապալառուի բնապահպանական աշխատախումբը պատասխանատու է ԲԿՊ իրականացման, ինչպես նաև Կապալառուի բնապահպանական կառավարման պլանի (ԿԲԿՊ) և

ՏԲԿՊ-ի պատրաստման և իրականացման, ինչպես նաև շինարարական գործողությունների մոնիթորինգի և հաշվետվության ներկայացման համար:

1.3. **ԾԻԳ-ի բնապահպանական աշխատախումբ**

ԾԻԳ-ի բնապահպանական գործողությունները իրականացնում է ԲԷՑ ՓԲԸ բնապահպանության մասով մասնագետ Հասմիկ Խաչոյանը:

ԲԷՑ ՓԲԸ բնապահպանության մասով մասնագետը պատասխանատու է ծրագրերի ԱԶԲ-ի բնապահպանական քաղաքականության և ՀՀ օրենսդրության հետ համապատասխանության համար: Նա լրիվ դրույքով աշխատող է սկսած 2016թ-ի օգոստոսի 1-ից:

1.4. **ԾՎԿԽԸ բնապահպանական աշխատախումբ**

Ներկայումս ԾՎԿԽԸ բնապահպանության մասով երաշխիքի մասնագետը Պիետրո Ռեսիան է: Նա բնապահպանության մասով միջազգային մասնագետ է (ԲՄՄ): Վերջինս պատասխանատու է բնապահպանական երաշխիքների միջազգային լավագույն փորձի մասով խորհրդատվության տրամադրման համար:

1.5. **Կապալառուի բնապահպանական աշխատախումբ**

Կապալառուի բնապահպանության մասով տեղական մասնագետ Իրինա Եսայանը պատասխանատու է տեղանք մոնիթորինգային այցելությունների, ամսական բնապահպանական հաշվետվությունների և անհրաժեշտության դեպքում ԿԲԿՊ թարմացման համար:

ՄԱՍ II

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2. **Բնապահպանական երաշխիքների ծրագիր**

2.1. **Համապատասխանությունը ազգային երաշխիքների հետ**

2.1.1. Ազգային երաշխքիների համակարգին և ազգային օրենսդրությանը համապատասխանելու համար Կապալառուն ձեռք է բերել անհրաժեշտ թույլտվություններ և լիցենզիաներ շինարարական գործողությունների՝ համապատասխանաբար շինարարության (Հավելված E) և աղբը համապատասխան վայր տեղափոխելու համար (Հավելված F): Տաթև համայնքի կողմից առաջարկված աղբի/թափոնների հեռացման վայրը (աղբավայրի համար թույլտվությունը տրվել է Տաթև համայնքի ղեկավարի կողմից) (Շինուհայր գյուղ) և ոչ պաշտոնական թարգմանությունը ներկայացված են Հավելված G: Ագարակ-2 ենթակայանի համար թույլտվությունները ներկայացվել են նախորդ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում:

2.1.2. Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի բոլոր գործողությունները համապատասխանում էին ազգային բնապահպանական համապատասխան նորմատիվային ակտերին: Կապալառուն երաշխավորում է, որ ԿԲԿՊ-ի պատրաստումը համապատասխանում է ազգային համապատասխան բնապահպանական նորմատիվային ակտերին:

2.1.3. Կապալառուն երաշխավորում է, որ շինարարական աշխատանքների ընթացքում տեղական (համայնքների) և տարածքային վարչական մարմինների հետ բոլոր անհրաժեշտ հաղորդակցությունները (անհրաժեշտության դեպքում) համապատասխանում են ՀՀ օրենսդրությանը և ձեռքբերված թույլտվություններին:

2.2. **Համապատասխանությունը ԱԶԲ երաշխիքների հետ**

2.2.1. Բնապահպանական երաշխիքները ապահովելու համար վերահսկվել է, որ շինարարական գործողությունների իրականացումը համապատասխան է ԲԿՊ պահանջներին, որը պատրաստվել է ԱԶԲ-ի բնապահպանական քաղաքականության և ՀՀ օրենսդրության համաձայն:

2.2.2. Որպես ″B″ կատեգորիայի ծրագիր, առնվազն տարին մեկ անգամ ԱԶԲ-ն կատարում է դիտարկման առաքելություններ, ստուգելու համար ″էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման ծրագրի″ շրջանակներում իրականացվող գործողությունների համապատասխանությունը ԱԶԲ Երաշխիքների քաղաքականության հաշվետվության (ԵՔՀ) (2009) պահանջներին:

2.3. **Կապալառուի աշխատանքների համապատասխանությունը ԿԲԿՊ հետ**

2.3.1. Ծրագրի իրականացման համար Կապալառուն առաջնորդվել է ՆԲՓ-ով և ԲԿՊ-ով՝ որպես հայտի և պայմանագրային փաստաթղթերի մաս:

2.3.2. Կապալառուի բնապահպանական կառավարման պլանը պատրաստվել է կապալառուի կողմից, որը մանրամասնում է տեղանքի բնապահպանական կառավարման պահանջների իրականացումն ու կառավարումը, մասնավորապես շինարարական աշխատանքների ազդեցությունների մեղմացման, մոնիթորինգի և հաշվետվության ներկայացման պահանջները, ապահովելու համար բնապահպանական երաշխիքների կատարումը: ԿԲԿՊ-ի հետ համապատասխանությունը կանոնավոր կերպով մշտադիտակվել և ներկայացվել է:

2.3.3. Ագարակ-2 և Շինուհայր ենթակայանների համար Կապալառուի Բնապահպանական կառավարման պլանների վերջնական տարբերակները պատրաստվել են Կապալառուի կողմից և հաստատվել ԾԻԳ-ի և ԾՎԿԽԸ-ի կողմից, համապատասխանաբար 2017թ-ի փետրվարի 15-ին և 20-ին:

2.3.4. Իր պարտավորությունների շրջանակում Կապալառուն կազմակերպել է հանդիպումներ 2016թ-ի օգոստոսի 12-ին Ագարակ-2 և 2016թ-ի հոկտեմբերի 4-ին Տաթև համայնքների (Շինուհայր գյուղ) ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում համայնքների ներկայացուցիչները տեղեկացվել են Ագարակ-2 և Շինուհայր ենթակայաններում իրականացվելիք աշխատանքների, ինչպես նաև հնարավոր բնապահպանական ազդեցությունների և մեղմացուցիչ միջոցառումների մասին:

2.4. **Դասընթացներ և իրազեկում**

2.4.1 Տեղանք այցելությունների ընթացքում Կապալառուի բնապահպանության մասով մասնագետը կապալառուի անձնակազմին ներկայացրել է բնապահպանական և սոցիալական պահանջները, ինչպես նաև հնարավոր ռիսկերը և բացասական ազդեցությունները և ԲԿՊ-ով սահմանված մեղմացուցիչ միջոցառումները:

2.4.2. Բնապահպանական, սոցիալական և առողջության խնդիրների մասով Կապալառուի անձնակազմի համար մշակվել է դասընթացի ծրագիր, որը տեղի կունենա հաջորդ հաշվետու ժամանակահատվածում երկու ենթակայանների համար ստորև նշված թեմաներով՝

- Բնապահպանական կառավարման պլան (ԲԿՊ)
- Արտակարգ իրավիճակներ, անձնակազմի պատրաստվածություն և իրազեկվածություն
- Առողջություն և անվտանգություն

2.4.3. 2017թ-ի դեկտեմբերի 27-ին ԱԶԲ-ի բնապահպանության մասով ազգային խորհրդատուն "ԱԶԲ-ի բնապահպանական քաղաքականության և պահանջների" մասով դասընթաց է կազմակերպել ԲԷՑ-ի բնապահպանության մասով մասնագետի հետ:

2.5. **Բողոքների լուծման մեխանիզմ**

2.5.1. Ազդեցության ենթարկված անձանց կողմից արձագանքների, մտահոգությունների և բողոքների ստացման համար, ծրագրի ամբողջ տևողության ընթացքում ապահովվել է ԱՋԲ-ի ուղեցույցների և քաղաքականությունների հիման վրա ստեղծված Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ): Բողոքների լուծման մեխանիզմը նպատակ ունի աջակցել ազդեցության ենթարկված անձանց՝ գրանցելով նրանց բողոքները և նկարագրել այն մեխանիզմը, որը մշակված է ժամանակին, և արդյունավետ կերպով լուծելու համար վերջիններիս բողոքները: Բողոքների լուծման մեխանիզմում կարող են ներգրավվել հետևյալ կողմերը՝ դժգոհողներ, կապալառու, խորհրդատու, ԾԻԳ, ՀԿ-ներ:

Բողոք ներկայացնելու ընթացակարգային քայլերը հետևյալն են՝

Հարցում իրականացնել կապված ծրագրի իրականացման, բնապահպանական խնդիրների և այլ հարցերի վերաբերյալ:

Քայլ 1: Ծրագրի իրականացման ընթացքում ազդեցության ենթարկված անձինք կարող են հղել իրենց առաջարկությունները/մտահոգությունները/բողոքները նախ և առաջ կապալառուի՝ Բողոքների լուծմամբ զբաղվող անձնակազմին: Վերջինս կփորձի լուծել բողոքները տեղական մակարդակով: Ազդեցության ենթարկված համայնքների նկատմամբ թափանցիկությունը և պատասխանատվությունը պահպանելու, ինչպես նաև ազդեցության ենթարկված անձանց տեղեկատվության, աջակցության և բողոքների լուծման ծառայությունները հասանելի դարձնելու համար կապալառուն կհաստատի հետևյալ ԲԼՄ՝ որպես ծրագրի ամբողջական ԲԼՄ մաս՝

- ✓ Ազդեցության ենթարկված անձինք կարող են մոտենալ կապալառուի ներկայացուցչին (շինարարության մասով աշխղեկ, ճարտարագետ, սոցիալական և բնապահպանության մասով մասնագետ) տեղանքում և/կամ գրանցել իրենց առաջարկությունը/բողոքը Անվտանգության գոտու մոտ գտնվող կապալառուի գրասենյակում պահվող բողոքների գրանցամատյանում:
- ✓ Կապալառուն ապահովում է կոնտակտային տվյալների տրամադրումը (տեղանքում գրասենյակի տեղը, աշխատանքային ժամերը, պատասխանատու կոնտակտային անձանց անունները, հեռախոսահամարները, կանոնավոր էլեկտրոնային նամակները և հասցեները և այլն) պլակատների և ծրագրի վերաբերյալ տեղեկատվական տախտակների միջոցով:

Քայլ 2: Կապալառուի կողմից բողոքի չբավարարման դեպքում ազդեցության ենթարկված անձինք կարող են դիմել ԾԻԳ: Կապալառուի կողմից բոլոր կոնտակտային տվյալները պետք է տրամադրվեն պլակատների և ծրագրի վերաբերյալ տեղեկատվական տախտակների վրա: Տվյալ պարագայում Կապալառուն պետք է տրամադրի անհրաժեշտ բացատրություններ և աջակցություն նշված կազմակերպություններին, անհրաժեշտության դեպքում ազդեցության ենթարկված անձանց հետ անձնական կոնտակտի միջոցով:

Վերջապես ազդեցության ենթարկված անձինք միշտ կարող են ակընկալել ՀԿ-ների և դատարանի ուշադրությունը և միջամտությունը: Այնուամենայնիվ, կգործադրվեն բոլոր ջանքերը

լուծելու համար խնդիրները կապալառուի, խորհրդատուի և ԾԻԳ-ի մակարդակով: Եթե հնարավոր չլինի, փորձեր կարվեն լուծել խնդիրները ԾԻԳ մակարդակով որքան հնարավոր է խուսափելու/նվազեցնելու համար դատավարությունները:

Անկախ արդյունքից և լուծումներից բոլոր բողոքները պատշաճ կերպով կփաստաթղթավորվեն և հասանելի կլինեն դիտարկման, մշտադիտարկման և գնահատման համար:

2.5.2. Ազդեցության ենթարկված համայնքներին կապալառուն պետք է տրամադրի բողոքների գրանցամատյանը, որը պահվում է տեղանքում:

2.5.3. Հաշվետու ժամանակահատվածում բողոքներ չեն գրանցվել:

2.6 **Ծրագրի բնապահպանական գործողությունները և ծրագրի մեջ ներգրավված կազմակերպությունների միջև կապը**

2.6.1 Հաշվետու ժամանակահատվածում կապալառուի բնապահպանության մասով մասնագետը իրականացրել է տեղանքի մշտադիտարկման այցելություններ Ագարակ-2 և Շինուհայր ենթակայաններ և ներկայացրել ամսական բնապահպանական հաշվետվություններ ԾԻԳ-ին:

2.6.2 2017թ-ի նոյեմբերի 15-ին և 16-ին ԾԻԳ-ի բնապահպանության մասով մասնագետը մշտադիտարկման այցելություններ է կատարել Ագարակ-2 և Շինուհայր ենթակայաններ: Տեղանքի ղեկավարը և ծրագրի ղեկավարը նախազգուշացվել են մշտադիտարկման այցելությունների ընթացքում հայտնաբերված թերությունների մասին:

ՄԱՍ III

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

3. **Մոնիթորինգ**

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում մոնիթորինգային գործողությունները իրականացվել են ԱՋԲ երաշխիքների և ԲԿՊ պահանջների հիման վրա մշակված Մոնիթորինգային ծրագրին համաձայն: Էլեկտրահաղորդման ցանցի վերակառուցում ծրագրի շրջանակներում 220/110կվ "Ագարակ-2" և "Շինուհայր" ենթակայանների վերակառուցման ծրագրի մասով ԾԻԳ-ի և կապալառուի մոնիթորինգային ծրագիրը ներառում է՝

- ✓ Տեղանք մոնիթորինգի կանոնավոր ամսական այցելություններ, ստուգելու համար "Ագարակ-2" և "Շինուհայր" ենթակայաններում շինարարական աշխատանքների համապատասխանությունը ԲԿՊ-ի պահանջներին
- ✓ Անհրաժեշտության դեպքում չպլանավորված այցելություններ
- ✓ Մոնիթորինգային ստուգաթերթիկի ամբողջացում և համապատասխանությունների ու անհամապատասխանությունների ամփոփում
- ✓ Կապալառուին անհամապատասխանության ծանուցումների տրամադրում
- ✓ Կապալառուի ամսական մոնիթորինգային հաշվետվությունների դիտարկում

3.1. **Ագարակ**-2 **և Շինուհայր ենթակայաններում ԲԿՊ-ների հետ համապատասխանության մոնիթորինգ**

3.1.1 2017թ. Նոյեմբերի 15-ին և 16-ին ԾԻԳ-ի բնապահպանության մասով մասնագետ Հասմիկ Խաչոյանը կատարել է մոնիթորինգային այցելություններ Ագարակ-2 և Շինուհայր ենթակայաններ:

Հայտնաբերված անհամապատասխանությունները հետևյալն են՝

- Շինարարական աշխատանքների ընթացքում աշխատողները չէին կրում անհատական պաշտպանության միջոցներ (ԱՊՄ)
- Տեղանքում նկատվել է յուղի արտահոսք: Սա կապված է ոչ թե շինարարական սարքավորումների, այլ տեղանք մուտք գործող և դուրս եկող մեքենաների հետ (օրինակ թափոնների և բեռի տեղափոխման մեքենաներ)
- Մշտադիտարկման այցելության ընթացքում հայտնաբերվել են շինարարական թափոններ (բետոնի և մետաղի մնացորդներ), որոնք համաձայն գլխավոր աշխղեկի հավաքվել են՝ հետագայում օգտագործման կամ հեռացման նպատակով
- Վերոնշյալ խնդիրները վերաբերում են երկու ենթակայաններին:

3.2 **Կապալառուն իրականացրել է հետևյալ հանձնարարությունները շտկելու համար անհամապատասխանությունները**

- Առողջության և անվտանգության մեղմացուցիչ միջոցառումները իրականացվել են համաձայն ԲԿՊ-ի, հատկապես աշխատողներին տրամադրվել են համապատասխան անհատական պաշտպանության միջոցներ (ԱՊՄ)
- Յուղի արտահոսքի հետ կապված խնդիրները պետք է վերացվեն համաձայն ԲԿՊ-ի, մասնավորապես հեռացնելով հողի աղտոտված շերտը և պահեստավորել այն ենթակայանում՝ որպես վտանգավոր թափոն: Հետագայում, օգտագործված յուղից առաջացած թափոնները պետք է տրամադրվեն թափոնների վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված ընկերությանը: Ներկայումս ԲԷՑ ՓԲԸ ձեռք է բերում երկաթե կոնտեյներներ նշված թափոնների տեղավորման և հետագա հեռացման համար:
- Աշխատանքից հետո տեղանքի ամենօրյա մաքրում:

ՄԱՍ IV

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ ՀԱՋՈՐԴ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ

Կապալառուի Բնապահպանական կառավարման պլանի հիման վրա ընտրված Գլխավոր կապալառուն պետք է հաստատի գործողությունների պլան յուրաքանչյուր վեց ամսվա համար, որը պետք է վավերացվի ԾԻԳ-ի և վերահսկման խորհրդատուի կողմից:

Գործողությունների պլան 2018**թ-ի հունվարից մինչև հունիս հաշվետու ժամանակահատվածի համար**

N	Գործողություն	Ժամկետ	Պատասխանատու
1	Տրամադրել համապատասխան հանձնարարություն Ագարակ-2 ենթակայանում ասբեստի տանիքի հեռացման համար	2018թ-ի ապրիլ-հունիս	ԾԻԳ/Կապալառու
2	Ենթակայաններում աշխատողների համար կազմակերպել և անցկացնել դասընթացներ	2018թ-ի հունվար-հունիս	ԾԻԳ/Կապալառու
3	Տեղանքի գնահատման այցելություններ և աջակցություն կապալառուին թափոնների կառավարման պլանների մշակման համար և Ագարակ -2 ու Շինուհայր ենթակայաններում աղբի տեղափոխման համար կառավարման պլաններ, ինչպես նաև այլ ընթացիկ աշխատանքային փաստաթղթեր:	Կապալառուի խնդրանքով	ԾԻԳ/ ԾՎԿԽԿ
4	Տեղանքին հատուկ ԲԿՊ պատրաստում, դիտարկում և հաստատում թափոնների և աղբի տեղափոխման համար	Անհրաժեշտության դեպքում	ԾԻԳ/ ԾՎԿԽԿ /Կապալառու
5	ԱԶԲ-ի երաշխիքների քաղաքականության հաշվետվության և Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրության մասով Կապալառուի բնապահպանական աշխատախմբին խորհրդատվություն տրամադրում	Անհրաժեշտության դեպքում	ԾԻԳ/ ԾՎԿԽԿ
6	Մշտադիտարկել կապալառուի շինարարական աշխատանքները Ագարակ-2 և Շինուհայր	2018թ-ի հունվար-հունիս	ԾԻԳ/ ԾՎԿԽԿ

	ենթակայաններում, ապահովելու համար ՆԲՓ, ԲԿՊ և ԿԲԿՊ պահանջների հետ համապատասխանությունը		
7	Դիտարկել և հաստատել կապալառուի առաջընթացի ամսական հաշվետվությունները	2018թ-ի հունվար-հունիս	ԾԻԳ/ ԾՎԿԽԿ
8	Այլ ընթացիկ խնդիրներ, ինչպիսիք են տեղանք չպլանավորված այցելությունները, դրանց արդյունքում հայտնաբերված թերությունները, շրջակա միջավայրի գնահատման նախագծերի վերանայումը, ինչպես նաև կապալառուի փաստաթղթերի դիտարկումը, հաստատումը, և այլն	Անհրաժեշտության դեպքում	ԾԻԳ/ ԾՎԿԽԿ
9	Բնապահպանական երաշխիքների մասով հաշվետվության ներկայացում	Կիսամյակային	ԾԻԳ

Հավելված A. Ագարակ-2 ենթակայանի տեղանքի սխեմա

Հավելված B Շինուհայր ենթակայանի տեղանքի սխեմա

Հավելված C Շինուհայր և Ագարակ-2 ենթակայանների տեղակայման վայրերը

Հավելված D Հաշվետու ժամանակահատվածում մոնիթորինգային այցելությունների ընթացքում հայտնաբերված անհամապատասխանությունները

	Վկայակոչում	**Պահանջ**	**Ներկայիս գործողությունները**	**Պահանջվող գործողություն/մեկնաբանություն**
	Ագարակ-2 և Շինուհայր ենթակայաններ			
1	Ստուգման ընթացքում պարզվեց, որ աշխատողները չեն կրում սաղավարտներ	Տրամադրել աշխատողներին համապատասխան համազգեստ	Կատարված է	Բոլոր աշխատողներին տրամադրվել է համապատասխան համազգեստ
2	Հողի վերին շերտի վրա կային յուղի հետքեր	Մաքրել յուղի հետքերը հողի վերին շերտից:	Կատարված է	Հողի աղտոտված վերին շերտը հեռացվել է և պահեստավորվել ենթակայանում՝ որպես վտանգավոր թափոն
3	Թափթփված տեղանք	Տեղանքի ամենօրյա մաքրում աշխատանքից հետո	Կատարված է	
	Նախորդ հաշվետու ժամանակահատվածում Ագարակ –2 ենթակայան մոնիթորինգային այցելությունների ընթացքում հայտնաբերված անհամապատասխանությունները			
4	Կանաչապատման նախագիծը առկա է, սակայն չկա ոռոգման նախագիծը	Կազմել ոռոգման նախագիծ	Ընթացքի մեջ է	
5	Կապալառուի տարածքի մի քանի շարժական վագոններ գտնվում են համայնքային հողի տարածքում: Կապալառուն ձեռք չի բերել համապատաս	Շարժական վագոնները համայնքին պատկանող տարածքից տեղափոխվել են ենթայականի տարածք:	Կատարված է	Հավելված H

	խան թույլտվություն համայնքից:			

Հավելված Ե Շինուհայր ենթակայանի շինարարության համար թույլտվություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզ «Տաթև» համայնք
(ՀՀ մարզ, համայնք)

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 02 «05» 10 2016 թ.

Տրված է կառուցապատող ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին, գրանցման վկայական թիվ 03Ա 061443, 06,10,2010թ.
Արամ Անանյան, ՀՀ ք. Երևան, Զորավար Անդրանիկի 1, ՀՀ Սյունիքի մարզ, «Տաթև» համայնք, «Շինուհայր» 220/110/35/6կվ, 271 ՄՎտ հզոր.
ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հասցե, հողամասի գտնվելու վայրը)

կառուցում և վերակառուցում շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝

(նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն)
կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների _____
_____ տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են «Էներգացանցնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ, լիցենզիա թիվ 8781
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների

_____
__կողմից.
կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել են՝
(նշել փորձաքննության տեսակը)
« ՀՀ նախագիծ Պետական Արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի, լիցենզիա N 11582, N 6576, N6577, N6578, N 6579 կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)
կամ՝ նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ _____
(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների հետ:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել *28 ամսվա* ընթացքում՝
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)
ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է էջից, կարված և դրոշմակնքված է կողմից:
(իրավասու մարմնի անվանումը)

կետով սահմանված դեպքերում) ----------

_____ կողմից
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի (նշել իրավասու մարմնի անվանումը)

և այլ շահագրգիռ մարմինների

_____ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 125-128-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի* 86-րդ կետով *սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

_____
նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)*
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա ___----------_____ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության
(շինությունների) _____----------_____ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)
սեփականատիրոջը (օգտագործողին) տրված սույն թույլտվությունը
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)
նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ_____----------_____:
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀՀ Սյունիքի մարզի «Տաթև» համայնքի ղեկավար

_____ Սերգեյ Սիմոնյան
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Հավելված F Աղբի տեղափոխման թույլտվություն՝ ձեռք բերված Տաթև համայնքի ղեկավարից (Շինուհայր գյուղ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

04 հոկտեմբերի 2016 թվականի № 57 -Ա

<<ԼԻԱՈՆԻՆԳ ԷՖԱՍԵԿ ԷԼԵԿՏՐԻԿԱԼ ԷՔՈՒԻՊՄԵՆՏ>>ՍՊԸ-ԻՆ ԽՈՇՈՐ ԵԶՐԱՉԱՓԻ ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով, 37-րդ հոդվածի 12-րդ կետով , << Աղբահանության և սանիտարական մաքրման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետով,, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի ե կետով, հիմք ընդունելով Տաթև համայնքի ավագանու 30.05.2016թ-ի N 27 – Ն որոշումը, հաշվի առնելով **<<Լիաոնինգ Էֆասեկ Էլեկտրիկալ Էքուիպմենտ>>ՍՊԸ-ի** 28.09.2016 թվականի գրությունը **որոշում եմ.**

Թույլատրել '<<**Լիաոնինգ Էֆասեկ Էլեկտրիկալ Էքուիպմենտ>>ՍՊԸ-ին** Տաթև համայնքի Շինուհայր գյուղի ենթակայանում շինարարական աշխատանքների ընթացքում կուտակված շինարարական խոշոր եզրաչափի աղբը հավաքել և տեղափոխել Տաթև համայնքի Շինուհայր գյուղի <<Կլտերու դրաղ>> թիվ 1 հասցեում գտնվող ձորակ: Հաշվել շինարարական խոշոր եզրաչափի աղբի ծավալը/խմ-ով/ և համապատասխան խմ-ի գումարը վճարել վերը նշված ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափով:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տաթեւ համայնքի ղեկավար՝
13 հուլիսի 2016թ. գյուղ Շինուհայր

Մ.Սիմոնյան

Հավելված G Աղբի տեղափոխման թույլտվություն՝ ձեռք բերված ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքից (ոչ պաշտոնական թարգմանություն)

Non-official translatio

Decree

04 of October 2016 N57-A

On permit "Liaoning-EFACEC Electrical Equipment" LLC to collect and transport the construction and bulky waste generated from the construction

Guided by the 17th article, 12th point of the 37th article of the Law of the Republic of Armenia on "Local Self-Government"; by the 5th point of the 8th article of the Law of the Republic of Armenia on "Refuse Collection and Sanitary Cleaning"; by the e) point of the 8th article of the Law of the Republic of Armenia on "Local Taxes and Fees",

Based on the Tatev Avagani (Council of Elders) Decision N27-N of 30th May, 2016 and taking into account the letter of the "Liaoning-EFACEC Electrical Equipment" Co., Ltd dated 28th Sept, 2016,

It was decided:

1. to permit "Liaoning-EFACEC Electrical Equipment" Co., Ltd to collect and transport the construction bulky waste generated from the construction works at the substation in Shinuhayr village of Tatev community to the gulch by the address 1 «Klteru Dragh» of the village.
2. to count the volume (in cubic meters) of the construction bulky waste and pay the fee for the corresponding cubic meter in the rate approved by the above mentioned Decision of the Avagani (Council of Elders).

Head of Community M.Simonyan

2016 October 13
Tatev Community
Village Shinuhayr

Հավելված Հ Գրություն շարժական վագոնների տեղափոխման համար

遼寧易发式電氣設備有限公司
LIAONING-EFACEC ELECTRICAL EQUIPMENT Co., Ltd

LEEEC-A-362
27 декабря 2017г.

Техническому директору ЗАО
«Высоковольтные электросети»
Г-ну Л.Адамяну

Копия: Консультанту проекта

Уважаемый господин Адамян

Сообщаем Вам, что временные сооружения в виде домиков для работников перенесены с территории общины на территорию подстанции "220/110/6кВ Агарак-2".

We inform you that temporary facilities such as houses for workers have been moved from the territory of the community to the substation "220/110 / 6kV Agarak-2"

С уважением,

Менеджер проекта Ванг Диангун

Նկարներ